

ՅԵ. ՆԿԱՐՑ

ՅԵՐԵՔ



ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՊԵՏՅՈՒՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

Handwritten scribbles

Handwritten: 9 11 / 105 3

ՅԵՐԵՒԱՆ

ԻՄՊՐԻՄԱՆ

891.715

Ը-94

ՅԵՎԳԵՆԻ ՇՎԱՐՑ

ՅԵՐԵՒԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՒԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Թարգմ. Ա. ՍԱԳՍԹԵՆԻՅԱՆ



Գ Ե Տ Հ Ր Ա Տ 1 9 3 1 Յ Ե Ր Ե Վ Ա Ն



4665-84

Дублетный фонд
госуд. библиотеки ССР
им. В. И. Ленина

Հրատարակ. № 1741
Դրավիճակ № 6584 (բ) Պատվեր № 3818 Տիրում 5000

Պետհրատի տպարան, Յերևան

ՅԵՐԵՔ ԶԱՆԴԻՊՈՒՄ

Հայրս խառատի պաշտոնով աշխատում եր Վիբորգյան թաղամասի գործարանում, իսկ յես այդ ժամանակ պարտք թափառում ելի: Մայրս մեռել եր, իսկ հայրս ժամանակ չուներ ինձնով դբաղվելու:

Հեղափոխությունը յեռում եր: Ամեն մի ուր մի նոր լուր ելինք լսում: Ռուսաստան ելին վերադառնում հեղափոխական առաջնորդներ: Ժողովուրդը խումբ-խումբ դրոշակներով և նվագախմբով գնում եր նրանց դիմավորելու:

Այդ ժամանակ մենք ինչ կարող ելինք հասկանալ: Յես տասներկու տարեկան ելի, իսկ Տոկա Սորոկինը — տասներեք: Յես ապրում ելի Ֆինլանդյան կայարանի մոտ, իսկ նա — Հոկաեմբերյան, վորն այն ժամանակ անվանում ելին Նիկոլայան: Այդ դիմավորությունները, նվագածությունը, ցուլցեղը — բոլորը մեզ համար մի տոնախմբություն եր: Յես և Տոկան միշտ իրար հետ վեճի ելինք մտնում, վճր կայարանից մեծ առաջնորդներ են դալիս, ումն են ավելի հանդիսավոր դիմավորում:

Նրա կայարանից ավելի շատ վերադառնում ելին Սիբիր արտորված առաջնորդներ, իսկ իմից — ֆինլանդյան յերկաթուղով, — արտասահմանից յեկողներ:

Ապրիլի յերեքին առավոտվանից սկսած հայրս սկսեց պատրաստվել, իսկ այդ ուրը նա աշխատելու յեր յերեկոյան հերթին:



— Դու սուր ես գնալու, հարցրի յես, նրան:

— Լենինին դիմավորելու:

— Վեր կաշարանում:

— Յինչանդական:

Պատասխանեց նա և դուրս գնաց:

Յես շտապելով հազիվ-հազ կոշիկներս դցեցի վտանքս, և դուրս չեկա, վորպեսզի հասնելի հորս ու հարցնելի, թե ով է Լենինը, բայց չհասա: Փողոցով ցուցաբարձների խիստ շարքեր ելին անցնում, և յես չկարողացա կտրել, հասնել հորս:

Ամբողջ որը յես պտրտում ելի կաշարանի առաջ և անհամբեր սպասում, թե յերբ պիտի դիմավորեն Լենինին, կարմիր դերձակները պարզած անցնում ելին ցուցաբարձները: Բեռնատար ավտոները դալիս ելին լիքը զինվորներով: Իսկ ճանապարհորդները կողովները ձեռներին բռնած, վազվզում ելին այս ու այն կողմ: Ժողովուրդ էր, վոր հավաքվում էր խումբ—խումբ: Տեսար մեկը խոսեց ուրիշի հետ անցքերի մասին—և սկսեց: Իսկուհն ամեն կողմից ամբոխը սկսում է վրա տալ, լսում են, մեկը համաձայն էր, մյուսը հայտնում: Իսկ խոսակցությունները միայն մի բանի վրա յես,—ճակատի մասին, պատերազմի մասին, գերմանացիների մասին: Նույն բանն էր, ինչ վոր ամեն որ: Սակայն յերբ պիտի յերեւա Լենինը, ով է Լենինը,—մտածում ելի յես:

Մեկ էլ տեսնեմ զեպի ինձ է վազում Տոլկան:

Ամբողջ որը կաշարանի առաջ պտուշտ ելինք դալիս, բայց նա դեռ չկար: Իրիկնադեմին, յերբ մութն ընկնում էր, լավեց յերաժշտության ձայն և սկսեց իրարանցում: Հրապարակը մտավ ծովային նավաստիների մի խումբ: Յերաժշտությունը թնդում էր, նավաստիներն ու-

դիդ շարքերով անցնում ելին. բոլորը կանգ ելին առնում ու նրանց դիտում:

Մտորը սուլեց և ամբողջ հրապարակը լուսավորվեց լուսարձակի լույսով: Կայարանին մոտեցավ մի զրահապատ: Մոտեցան բանվորները շարքերով: Յես և Տոկիան ուրախ ուրախ վազվզում ելինք այս ու այն կողմ, առանձին հաճույքով և հետաքրքրութամբ մտիկ ելինք անում զրահապատին և չերաժշտութուն լսում: Մենք ուրախութունից ճրվճրվում ելինք և սուլում:

Ամբոխը գնալով հետդհետե ավելանում եր, նրանք խումբ-խումբ մոտենում ելին կայարանին:

— Այ քեզ գեմավորիլ. — առանձին նախանձով նկատեց Տոկիան:

Կայարանում մի անդամից սկսեցին խփել բաղմաթիվ գանգեր: Դա նշան եր, վոր դնացքը դուրս ե յեկել վերջին կայարանից: Մենք շտապով փորձեցինք անցնել կայարան, բայց իզուր: Խիտ շարքերով անհնարին եր անցնել, ճանապարհ չկար, չեյին թողնում:

Մենք սողացինք պլատֆորմի տակ, մտանք մի ինչ վոր դնացքի տակ և դատարկ փայտյա պերոնների վրայով վազեցինք դեպի դիմավորման տեղը:

Բայց ենտեղ ել ժողովուրդը շատ եր: Գնացքը մոտեցավ, իսկ մենք վոչինչ չեյինք տեսնում: Միայն լսվում եր ուռն, ուռն, և նվազախումբը:

— Յեկ նորից վազենք հրապարակ, — ասաց Տոկիան: Տեսնենք յերբ դուրս կգա:

Մենք յետ ելինք վազում, մեկ ել հանկարծ պլատֆորմում տիրեց խորին լուռություն: Յեկվորը սկսեց ճառ արտասանել: Հեռվից վազքի ժամանակ յետ առաջին անգամ լսեցի Լենինի ձայնը, դեռ չիմանալով, թե ումն եր լսում: Սկզբում բառերը անհնարին եր վորոշել, բայց վեր-

ջում, ըստ լերևույթին իր ճառը վերջացնելով, նա սկսեց խոսել ավելի ուժեղ, և մենք լսեցինք շատ պարզ և կրտրուկ՝

— Կեցցե Սոցիալիստական հեղափոխությունը:
Մենք մի քիչ շփոթվեցինք: Գնացքները սկսեցին յետ ու առաջ շարժվել, անհնարին եր միանգամից լերկաթուղու գծերից դուրս գալ:

Վազեցինք հրապարակ և տեսանք այն, ինչ վոր ձեզանից ամեն մեկը հիմա կարող ե տեսնել, յեթե գնա Ֆինլանդյան կայարանի հրապարակը:

Մենք տեսանք զրահապատը, և նրա վրա Լենինին: Միայն զրահապատը իսկական եր և նրա վրա նստողը կենդանի Լենին:


Լենինը ճառ եր արտասանում, մերթ բարձրանալով կոշիկների ծայրերի վրա, մերթ ցածրանալով:

Լուսարձակները լուսավորում ելին նրան բոլոր կողմերից: Նա այնքան հասկանալի յեր խոսում, վոր հրապարակում տիրել եր լուռություն և բոլորը լսում ելին, միայն հեռվից գալիս եր քաղաքի ելեքտրոքարշերի ձայնն ու զրնգընդոցը:

Այստեղ Լենինը յուր ճառը վերջացրեց նույնպես բարձր ու կարուկ՝

- Կեցցե Սոցիալիստական հեղափոխությունը:
- Տեսնո, ասացի յետ Տոկային:
- Ինձ Լենինը դուր չեկավ, — պատասխանեց նա:
- Ի՞նչու դուր չեկավ:
- Դուր չեկավ, վորովհետե ֆաստնով մարդ չի:
- Իսկ ինձ դուր չեկավ հենց այդ բանը: Դուր չեկավ այժմ բոլորին արդեն ծանոթ այդ գեմքը և նա այնպես պարզ եր խոսում:

Այսպես տեսա յետ Իլլիչին առաջին անգամ:



Անցավ մոտ յերկու ամիս: Գնալով ապրուստը քա-
ղաքում դժվարանում եր:

Մի անգամ հայրս ինձ կանչեց ու ասաց:

— Դու գնալու յես:

Նա ըստ իր սովորութեան կարճ եր խոսում:

— Դու կգնաս Սիմոնի մոտ, յես քու մասին նրա
հետ խոսել եմ: Թե չե այստեղ առանց մթերքի քաղցած
ես մնում և առանց խնամքի յերես կառնես: Գնա:

Դա ճիշտ եր:

Հայրս որերով տուն չեր գալիս: Նա մեկ Սմոնիումն
եր լինում, մեկ ել գործարանում, իսկ յես յերբեմն բան
ուտում եյի, յերբեմն չե, դպրոց գնում եյի, կամ չեյի
գնում:


Սիմոնը հորս հարազատ յեղբայրն եր, աշխատում եր
նիկալալեվյան յերկաթգծում վորպես պահակ: Նրա մոտ
գնալը մի քանի ժամվա ճանապարհ եր: Նրա պահակա-
տանը շուրջը բոստան կար և տնտեսութուն: Ապրում եր
նա անկարոտ, կնոջ հետ, յերեխաներ չուներ և հաճույ-
քով համաձայնեց ինձ վերցնել յուր մոտ պահելու համար:

Յես գնացի նրա մոտ և մի անգամից ընկա խաղա-
ղության մեջ. վոչ հասարակութուն կար, վոչ ցուլցեր,
վոչ ել յերաժշտութուն: Գիշեր—ցերեկ անցնում ելին
միայն բեռնատար, մարդատար, զինվորական գնացքներ:

Մի անգամ ել անցավ մի մոխրագուհն, ամբողջաձև,
ինչպես ոճր, գնացք, իսկ մեջտեղը շոգեկառք: Պատուհան-
ների պողպատյա ծածկոցների տակից դուրս ելին ցցված
թնդահոթներ: Դա զրահապատ գնացքն եր:

Սկսեցին հուլիսյան որերը: Յես լսեցի, վոր Լենինին
բանտարկութուն ե սպառնում, վոր նա թագնվում ե:

Յես այստեղ ժամանակ ունեյի մտածելու: Սկսեյի



մտածել, անհանդատանալ — արդյոք ինչ է կատարվում մեր տանը:

Մի անգամ գիշերն ինչ-վոր մեկը մեր լուսամուտաք ծեծեց: Սիմոնը դուրս չեկավ, արագ վերադարձավ, շփոթված սկսեց դիտել սենյակը, սոտեցավ լուսամուտին և վարագույրն իջեցրեց:

Մեկ էլ նորից դուրս չեկավ և այս անգամ վերադարձավ հորս հետ միասին:


Յես իսկույն պռակած տեղիցս վեր թռա, հայրս ձեռքի շարժումով հասկացրեց, վոր պառկեմ և շրջուկով լեկար ժամանակ խոսում եր Սիմոնը հետս:

Առավոտյան յես իմացա, վոր հորս պետք է բանտարկելին: Յե՛վ նա յեկել եր մեզ մոտ մի քանի որ թագնվելու համար: Նա յերեք որ մեզ մոտ ապրեց և վերադարձավ Պիտեր: Ինձ հետը չտարավ:

Իո՛ւ, ասաց նա, եստեղ անելու բան չունես:

Յեկան Հոկտեմբերյան որերը: Շուտ շուտ սկսեցին անցնել դինվորական զնացքներ: Մարդատար զնացքները լիքն էլին ձամբորդներով: Նրանց տանիքների, տենդերների, վագոնների զսպանակների վրա յել մինչև անգամ նստած էլին մարդիկ: Այժմ արդեն զնացքները կանգնում էլին, վորտեղ պատահում եր: Հաճախ զնացքները կանգնում էլին մեր պահակատան մոտ կամ կես վերստ գենը գետակի մոտ, ուր փոքրիկ անտառ կար: Այնտեղ դուլլերով շուր ելին լցնում շոգեկառքը: Կամ փայտ էլին կրտրում: Յեկվորներից մենք իմացանք, թե ինչ է կատարվում Պիտերում:

Ամեն մեկն իրն եր ասում: Վո՞մանք ասում էլին, թե բալլեկիները յերեք որ ել չեն դիմանա, մյուսները — թե լենինը ընդմիշտ հաղթեց: Ասում էլին, թե Գերմանացի-



ները այսօր կամ վաղը կվերցնեն Պիտերը, թե կառավարությունը կանցնի Մոսկվա:

Մի գիշեր հորչեղբայրս՝ Սիմոնը հիվանդացավ: Այդօրը նրա կինը գնացել եր կայարան մթերքների:

Հորչեղբայրս ինձ ասաց.

— Վերցրու դեղին լապտերը, լաթով մաքրիր և գնաց գիշերվա ժամի 2-ի անցնող գնացքը գիմավորելու: Յես չեմ կարող վեր կենալ:

Յես դուրս չեկա: Մուժն ե: Գնացքի ձայն չի լսվում:

Հեռվից լերկինքը բոցավառված եր—յերևի ինչ-Վոդ գյուղ ե վառվում: Թփերի մեջ խըշխըշոց եր լսվում—լորդուկներն են սողում, գորտերը թե՛ արվեստ:

Հեռվից սուրոց լսվեց:

Յես լապտերը սրբեցի և մոտեցա գծին: Կամաց-կամաց շրջանագիծ յերեք կրակներ յերևացին: Գնացքը գլալիս եր զգուշ, ինչպես ծանր բեռնավորված, և կարծես թե վախում եր իր բեռից:

Մեր պահակատանը մոտենալով սկսեց ավելի ու ավելի դանդաղ շարժվել և հանկարծ կանգ առավ:

— Նայիր ձախին, — գոչեց մեկը շոգեկառքից:


— Չախ բուքսին նայիր, ասում են քեզ:

Նայում եմ ուղիղ իմ դիմացս ե—լայն լուսամուտներով 1—ին կարգի վագոնը: Մեկը հանկարծ լուսամուտի վարագուլըրը յետ քաշեց:

Յես զարմանքից ծուլ յեղա և քիչ մնաց լապտերը ձեռքիցս ընկներ:

Լուսամուտի առաջ կանգնած եր Լենինը:

Յես չեյի կարող սխալվել: Հիշողությանս մեջ նա շատ խորն եր տպավորվել: Մի բան միայն ինձ շփոթեցնում եր—Լենինի մուրտքը նույնը չեր: Սուպերն ընկել եր



Նրա գեմքի ցածի մասի վրա, հնարավոր չէր մանրամասն դիտել, մուրուքն ավելի կարճ էր քան, թե առաջ, և կարծես բոլորովին շուներ: Լենինը ուզեց լուսամուտը բարձրացնել, բայց ինչպես չերևաց, լուսամուտը ամբարշատ էր ձմեռվա համար: Լենինը չերևի ուզում էր ինձ հարցնել—**Թե ի՞նչու չենք կանգնել:** Բայց մեկը մտաեցավ նրան և ինչ վոր բան ասաց, և Լենինը վարագույրն իջեցրեց: Գնացքը ծանր և զգուշ շարժվեց առաջ:

Մի տարի անց յես իմացա, վոր իրոք այդ գիշեր յես Լենինին յեմ տեսել: Ժողկոմխորհը Սմոլնիյից կրեմլ էր տեղափոխվում: Իրոք՝ Վ. Իլյինը իր մուրուքը սափրել էր, յերբ թագնվում էր Սեստրորեցկի մտաերթը: Յես տեսա նրան այն ժամանակ, յերբ մուրուքը նոր էր սկսել աճել:


Իսկ յերրորդ հաշիպումը: Ամենից տխուրը յերրորդ հանդիպումն էր: Այս անգամ Վ. Իլյինն տեսա ավելի մտախիլից, քան՝ յերբևիցե: Յես նրան լավ գիտեցի, բայց նա լուռ էր և աչքերը խուփ: Նրա դագաղի մոտ կանգնած էյին Բուդյոննին և յերեք ինձ անծանոթ անձեր: Յես ԲՈՒՀ-ի ներկայացուցչուժյան հետ անցա Իլյինի կողքից:

Ահա այն մարդը, վորին լսեցի Փինլանդյան կաշարանում, յերբ նա խոսում էր զրահապատից: Նա այն ժամանակ գոչեց բարձրաձայն և կտրուկ:

— Կեցցե Սոցիալիստական հեղափոխությունը: Յե՛վ նրա այդ նշանավոր լողունգը սրբեց ամեն ինչ ու հաղթեց:

Handwritten text in Armenian script, appearing as bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to the bleed-through effect.

Handwritten text in Armenian script, appearing as bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to the bleed-through effect.



ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

4515



ԵՎԳ. ՇՎԱՐՇ
ՏՐԻ ՎՏՐԵՇԻ
ԱՐՄԵՆԳԻՅ - 1931 - ԵՐԻՎԱՆԻ

891.715
Շ-94